ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/80

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 փետրվարի 2023 թ. N 80

ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝	ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՀԱՄԱՅՆՔ, ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂ. 31

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ.փետրվարի 10-ին քննարկեց «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԵՕՀՊՄՔ, ՄՈՒՀ, Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	20 դեկտեմբերի 2018 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	06 մայիսի 2022
փորձագիտական այցի իրականացում	06-09 սեպտեմբերի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	25 նոյեմբերի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	16 դեկտեմբերի 2022 թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Հետազոտությունը և զարգացումը» և «Որակի ներքին ապահովման համակարգը»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում.

ԵՕՀՊՄՔ-ն ուսումնական գործընթացը կազմակերպում է մոդուլային ծրագրերով և պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Քոլեջը մեծ ուշադրություն է դարձնում գործնական ժամերին: Դասավանդման մեթոդների և ուսանողներին տրվող առաջադրանքների ընտրությունը պայմանավորվում է տվյալ մարզաձևի առանձնահատկություններով և նպաստում է սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը: Քոլեջի ուսանողները ստանում են մարզիչի որակավորում և դրան զուգահեռ հնարավորություն ունեն ձեռք բերելու նաև մրցավարության փորձառություն տարբեր երիտասարդական և պատանեկան առաջնություններում, որի արդյունքում մարզիկ ուսանողները ձեռք են բերում նաև մարզչական կարողություններ:

ՄՈՒՀ-ը համալրված է բարձր որակավորում ունեցող դասախոսական, մարզչական կազմով: Մշակվել է դասախոսի գնահատման ընթացակարգ, մարզիչների գնահատման համար հիմք են ծառայում ոչ միայն դասալսումները և հարցումները, այլև՝ տարվա ընթացքում մարզիկների ցուցաբերած արդյունքները սպորտի ոլորտում:

Քոլեջում առկա են մասնագիտական կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ: ԵՕՀՊՄՔ–ն ջանքեր է ներդնում ռեսուրսների բարելավման և նորերի ձեռքբերման ուղղությամբ, զուգահեռաբար այն մարզաձևերում, որի գործնականների կազմակերպման համար չունի անհրաժեշտ պայմաններ, համատեղ կիրառվում են մարզադպրոցների ռեսուրսները:

2. Կառավարման ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ, և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Հաստատության առաքելությունը համահունչ է ՈԱՇ-ին, ՌԾ նպատակները և խնդիրները բխում են առաքելությունից: ՄՈՒՀ-ը մշակել է 2021-2026թթ. ՌԾ և դրա կատարման պլան-ժամանակցույց: Սա եղել է քոլեջի ռազմավարական պլանավորման առաջին փորձառությունը: Վերջին տարիներին քոլեջում տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ՝ ռեսուրսային բազայի հարստացում, կառավարման համակարգի կատարելագործում: Վերանայվել և հստակեցվել է քոլեջի կազմակերպական կառուցվածքը, ներդրվել են նոր հաստիքներ և մի շարք կանոնակարգեր:

ԵՕՀՊՄՔ-ում կառավարումը կոլեգիալ է: Որոշումներն ընդունվում են ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությամբ:

Կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովման գործընթացները, սակայն որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է: Որակի ապահովման համակարգը լիարժեքորեն չի արձագանքում քոլեջում իրականացվող փոփոխություններին, չի գնահատվում իրականացված բարեփոխումների ազդեցությունը:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը հիմնականում աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը.***

ՄՈՒՀ-ում արմատավորված չեն հետազոտական գործունեության մեխանիզմները, միևնույն ժամանակ ներդրված ստեղծագործական միջավայրը և մոտեցումները, արտաքին կապերը և շահակիցների հետ հետադարձ կապը զարգացման և առաջխաղացման հնարավորություն են ստեղծում ՄՈՒՀ-ի համար:

2021 թվականին ներդրվել է արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժինը: Քոլեջը քայլեր է ձեռնարկում օտար լեզուների կատարելագործման ուղղությամբ: ԵՕՀՊՄՔ-ն ակտիվորեն համագործակցում է ՀՀ, ԱՀ մարզական կառույցների, դպրոցների, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի և այլ կառույցների հետ:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն ըստ էության ներառում է փորձագետների կողմից տրված հիմնական խորհրդատվությունները: Ծրագիրն իրատեսական է, իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով՝ **«Հետազոտությունը և զարգացումը» և «Որակի ներքին ապահովման համակարգը»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.

- ուսանողների մասնագիտական բանավոր խոսքի զարգացմանն ուղղված առաջադրանքների բազմազանեցմանը,
- կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման քաղաքականության վերանայմանն ու բարելավմանը,
- հետազոտության ոլորտում հավակնությունների և ուղղությունների հստակեցմանը՝ դրանք փոխկապակցելով կրթական ծրագրին և աշխատաշուկայի պահանջներին,
- ուսանողների վերլուծական, քննադատական, հետազոտական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը նպաստող կրթական բաղադրիչի ներդրմանը,
- ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքներին ներկայացվող հստակ պահանջների մշակմանը,
- ուսանողական և դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների ներդրմանը՝ ոլորտային հետազոտություններում ներգրավվելու համար,
- որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրմանը՝ առաջնորդվելով առաջավոր փորձի լավագույն օրինակների ուսումնասիրմամբ և տեղայնացմամբ,
- տվյալների հավաքագրման մեխանիզմների ընդլայնմանը, որոնք թույլ կտան վեր հանել քոլեջում առկա մարտահրավերները:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2023 թ. մարտի 14
ք.Երևան